

606

8

0-78

19 MAY 2005

6172

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԶՍԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ № 28

8
0-78

Օ Տ Ա Ր

Հ Ե Ք Ի Ա Թ Ն Ե Ր

II

Թարգմ. ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

1002
9048

- 1. ԱՆԵՐԵՒՈՅԹ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ
- 2. ԱՍՏՂԵՐԻՑ ԻԶԱՄ ԿԻՆԸ

•••••

Թ Ի Ֆ Լ Ի Չ
Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7
1916



ԱՆԵՐԵՒՈՅԹ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

(Գերմանական)

Գիւղից մի քիչ ծուռը, սարալանջին մի փոքրիկ տնակում իր ծեր հօր հետ ապրում էր ջահէլ Իերզը: Ունեցած հողներն ուղիղ էնքան էր, ինչքան որ հարկաւոր էր անկարօտ ապրելու համար: Հէնց տան կողքից սկսւում էր կաղնի ու հաճարի ծառերի թաւ ու պառաւ անտառը, իսկ տան առաջին ընկած էր մի հին կոտրած ջաղացաքար: Էն հին կոտրած ջաղացաքարին նստողի աչքին սքանչելի տեսարան էր բացւում դէպի հովիտը, դէպի հովիտով վազող գետը ու դէպի սարերը, որ բարձրանում էին գետի միւս կողմը: Իերզը, իր գործը դաշտում վերջացնելուց յետոյ, իրիկունքը սիրում էր նստել էս քարի վրայ, արմունկները ծնկներին տաւած ու գլուխը յենած ձեռներին՝ նա ժամերով նստում էր ու անձնատուր էր լինում իր ցնորքներին:

Եւ որովհետեւ գիւղի գործերով էլ շատ չէր հետաքրքրւում ու գրեթէ միշտ մնում էր խաղաղ, մենակ, իր մտքերի մէջ խորասուզւած, գիւղացիք էլ, հեգնելով, անունը դրել էին Երազող Իերզ: Նա էլ իսկի չէր նեղանում սրանից:

Քանի մեծանում էր՝ էնքան առանձնանում էր ու դառնում լռակեաց, իսկ երբ հէրն էլ մեռաւ ու հին կաղնենու տակ թաղեց, նրանից յետոյ հօ էլ ձէն չէր հանում: Այժմ առաջւանից աւելի յաճախ էր նստում հին կոտրած ջաղացաքարին ու նայում էր ներքեւ, հովիտին, որտեղից իրիկւան մըշուշը բարձրանում ու մեղմիկ սողում էր սարն ի վեր. հետեւում էր հետզհետէ ցած իջնող մութին, ծագող լուսինն ու

իրար ետևից ցուցող աստղերին: Նրան էնպէս էր թւում, թէ գետի ալիքները երգում էին, սկզբում մեղմ ու կամացուկ, ապա թէ պարզ ու լսելի: Երգում էին էն սարերից, որտեղից սկիզբ էին առնում, երգում էին էն ծովերից, որոնց ծոցն էին հոսում, ու իրենց ջրերում ապրող յաւերժահարսներից: Սրանից յետոյ անտառն էր սկսում աղմկել, միայն թէ ուրիշ տեսակ, քան թէ սովորաբար աղմկում են անտառները, ու շատ զարմանալի պատմութիւններ էր անում:



Միւսներից շատ պատմութիւն գիտէր մանաւանդ ծառերից մինը, էն պառաւ կաղնին, որի տակ թաղւած էր իր հէրը: Աստղերն էլ հօ, որ ցուցում էին երկնքում, ասես թէ լրցւում էին ներքե թափւելու սաստիկ տենչով, ուղում էին թափւեն ցած էն կանաչ անտառն ու էն կապուտակ գետը, ու էնպէս էին վառվռում ու թրվռում, կարծես թէ էլ չէին կարողանում դիմանան ներքեի հրապուրանքներին: Բայց հրեշտակները, որոնցից ամեն մինը կանգնած էր իր աստղի կողքին, շարունակ զսպում էր նրանց. «Աստղիկներ, այ աստ-

ղիկներ, էդպէս խենթութիւն մի անէք, այ աստղիկներ: Դուք երեսայ հօ չէք, որ էդպէս գոթութիւններ էք անում. քանի-քանի հազար տարի է ապրում էք տիեզերքում: Աւելի լաւ է խաղաղ ու հանգիստ ձեր տեղը մնաք...»:

Այո, հրաշալի էր էն հովիտը: Միայն թէ էս ամենը տեսնում ու լսում էր մենակ երազող Իերգը: Իսկ գիւղում ապրող մնացած մարդիկ սովորական մարդիկ էին, մտքներով էս տեսակ բաներ իսկի անց էլ չէին կացնում: Ժամանակ առ ժամանակ նրանք կտրում էին անտառի հսկայ ծառերից մէկն ու մէկը, սղոցում, ջարդում, ծղան անում ու կրակին վրայ տալով ասում. «Դէ, այ հիմի նորից կարող ենք սուրճ եփել խմել»: Գետի մէջ իրանց լացքն էին անում, որ շատ մեծ յարմարութիւն էր նրանց համար: Աստղերին նայելիս էլ երբ որ տեսնում էին շատ են պայծառ ցուում, ասում էին. «էս գիշեր թունդ ցուրտ է լինելու, մեր կարտոֆիլը ցրտատար չը լինի»: Իերգն էլ եթէ ճգնում էր նրանց բացատրի, թէ բանն ընչու՞մն է — ծիծաղում էին վրէն:

Մի անգամ էլ, երբ Իերգը իր սովորութեամբ հին ջաղացաքարի վրայ նստած միտք էր անում, թէ ինքը ինչքան է մենակ բովանդակ աշխարհքում, քունը տարաւ ու աննկատելի քնեց: Երազում տեսաւ, իբրեւ թէ երկու արծաթ շղթաներով երկնքից մի ոսկի ձօճ էր իջնում ներքե: Ամեն մի շղթայի ծէրը ամրացած էր մի աստղից, իսկ ձօճում նստած էր մի գեղեցիկ աղջիկ ու էնպէս բարձր էր ձօճում, որ մին երկնքից գետին էր հասնում, մին էլ գետնից երկինք էր թռչում: Ամեն անգամ, հէնց որ ձօճը երկնքից երկրին էր մօտենում, աղջիկը ուրախութիւնից ծափ էր տալիս ու մի վարդ էր ձրգում Իերգին: Բայց յանկարծ արծաթի շղթաները կտրեցին ու ձօճը աղջկայ հետ՝ երկուսն էլ երկինք թռան, գնացին վեր, վեր, մինչև որ աչքից բոլորովին չբացան:

Իերգը քնից վեր թռաւ, չորս կողմը նայեց, տեսաւ քարի վրայ, կողքին մի վարդի փունջ:

Միւս օրը նորից քնեց էնտեղ, նորից նոյն երազը տե-

սաւ, ու երբ որ զարթնեց, դարձեալ կողքին վարդեր էին թափած:

Էսպէս շարունակ մի ամբողջ շաբաթ: Իերգը վճռեց որ էս երազը եթէ էսպէս նոյնութեամբ կրկնուում է, կը նշանակի սրա մէջ մի ճշմարիտ բան կայ: Վճռեց, տան դուռը փակեց, բանալին գրպանը դրեց ու գնաց էն աղջկանը որոնելու:

Գնաց, գնաց, երկար թափառեց, շատ ման եկաւ, վերջապէս մի երկիր տեսաւ, հեռու, ուր ամպերը հասնում էին մինչև գետին: Աշխոյժ, ուրախ առաջ գնաց ու մի քիչ ժամանակ յետոյ ընկաւ մի մեծ անտառ: Յանկարծ էստեղ մի հառաչանքի ձէն ընկաւ ականջովը: Վազեց էն կողմը, որտեղից լսում էր ձէնը. տեսաւ ալեխառն մօրուքով մի պատկառելի ծերունի՝ գետին ընկած, երկու մերկանդամ այլանդակ մարդ էլ վրէն չոքած՝ ուզում են խեղդեն: Իերգը չորս կողմը նայեց, տեսնի ինչով կարող է օգնութեան հասնի. մի մեծ կոճղ պոկեց, որ պոկելուն պէս դարձաւ ծանր տապար: Էս տապարով էնպէս ուժգին յարձակեց շարագործների վրայ, որ նրանք օգնութիւն կանչելով ծերունուն թողին ու փախան: Իերգը վեր քաշեց ծերունուն, օգնեց որ կարգի գայ ու հարցրեց, թէ ինչո՞ւ էին էն տկլոր աւագակները խեղդում իրեն, ի՞նչ էին ուզում:

Եւ ծերունին պատմեց, թէ ես Երազների աշխարհի թագաւորն եմ, սխալմունքով մի քիչ հեռացել էի իմ տէրութեան սահմաններից, ընկել էի իմ ամենաօխերիմ թշնամու— Իրականութեան թագաւորի տէրութիւնը: Էս բանը նկատել էր Իրականութեան թագաւորը, իր ծառաներից երկուսին զրկել էր իմ դէմ, նրանք էլ դարան մտնելով բռնել էին ինձ՝ ուզում էին խեղդէին...

— Դու Իրականութեան թագաւորին ի՞նչ վատութիւն ես արել, որ... հարցրեց Իերգը:

— Ոչ մի վատութիւն, — պատասխանեց ծերունին, — բայց առհասարակ նա շատ անբարիշտ բնութիւն ունի. իսկ ինձ ատելով ատում է:

— Բայց էն մարդիկը, որոնց նա զրկել էր քո դէմ, տկլոր էին:

— Հա, պատասխանեց Երազների թագաւորը, նրանք մօրուց տկլոր են: Եդպէս է Իրականութեան աշխարհքի մօզան: Էնտեղ ամենքը, նոյնիսկ իրենց թագաւորը տկլոր են ման գալիս ու խակի էլ չեն ամաչում դրանից: Զարմանալի խալի են: Բայց դու որ իմ կեանքը փրկեցիր, ուզում եմ երախտահատոյց լինեմ քեզ ու ցոյց տամ իմ աշխարհքը: Երազների աշխարհքը ամենասքանչելի աշխարհքն է, իսկ երազները— իմ հպատակներն են:

Ասաւ Երազների թագաւորն ու առաջ գնաց. Իերգը հետեւեց նրան:

Երբ հասան էնտեղ, որտեղ ամպերը գետնին են առնում՝ թագաւորը մի թփուտում ծածկած դուռը ցոյց տւեց, որ՝ ով որ չիմանար, անկարելի բան էր, որ գտնէր ու բաց անէր:

Թագաւորը դուռը բաց արաւ, իր ուղեկցին տարաւ հինգ հարիւր աստիճան ներքե՝ մի պայծառ, լուսաւորւած քարանձաւ, որ ձգւում էր երկար, շատ ու շատ մղոններ: Զարմանալի գեղեցիկ էր էն քարանցաւը: Էլ ի՞նչ ասես որ չկար էնտեղ: Մեծ լճերի մէջ՝ կղզիների վրայ կանգնած պալատներ կային, ու կղզիները հանգիստ լողում էին վճիտ ջրերում: Ով ուզէր էն պալատներից մէկն ու մէկի մէջ մտնի՝ պէտք է ամիս կանգնէր ու կանչէր,

«Պալատ, պալատ, լողա՛ դէպ ինձ,

Որ հեշտ մտնեմ ես քո դռնից»:


Ու պալատն իրան իրան կըլողար դէպի ամիսը: Կային և ուրիշ դղեակներ, որ հանդարտ օրօրում էին ամպերի վրայ: Պէտք էր միայն ասել.

«Դղեակ, դղեակ, իջի՛ր դէպ ինձ,

Որ հիանամ ես քո տեսքից»:

Ու դղեակը հանդարտիկ գետին կիջնէր: Պարտէզներ էլ կային, որոնք ծաղիկներ ունէին, որ ցերեկները բուրում էին անուշահոտ, իսկ գիշերները լուս էին տալիս: Ամենաերկնաբանգ

գոյներով վառուղ հաւքեր կային, որ հէքիաթներ էին պատմում, և ուրիշ շատ ու շատ զարմանահրաշ բաներ: Երազող իերգը զարմանքից ու խնդութիւնից չէր իմանում հորին նայի, հորը թողնի:



—Արի հիմի քեզ իմ հպատակները — երազները ցոյց տամ, ասաւ թագաւորը:—Երեք տեսակ երազներ ունեմ. լաւ երազ-

ներ—բարի մարդկանց համար, վատ երազեր — չարերի համար, և, սրանցից բացի, ունիմ նաև խիպիլիկ երազներ: Սրանցով էլ զանազան խաղեր եմ յօրինում: Ձէ՞ որ երբեմն երբեմն թագաւորներն էլ են ուզում զւարճանալ:

Էստեղից թագաւորը իերգին տարաւ մի այգի, ուր. ծառուղիները արծաթից էին, ածուները ոսկուց, իսկ ծաղիկները անգին քարերից: Էստեղ զբօսնում էին լաւ երազները:

Առաջինը իերգի աչքին ընկաւ մի դալկադէմ նորատի շահէլ կին, ձեռքին խաղալիքներով լիքը մի արկղիկ:

—Սա ո՞վ է:

—Էդ կինը ամեն իրիկուն գնում է մի հիւանդ երեխի մօտ, որի մէջը նորերս է մեռել, ասաւ երազների թագաւորը: Յերեկը որբ երեխան միշտ մնում է մենակ, իսկ գիշերները սա գնում է հետը խաղում ու մօտը մնում մինչև լուս: Սա կայն, եկ, մի քիչ էլ գնանք դէնը:

Գնացին: Մտան մի ուրիշ այգի լիքը բարի երազներով: Բարի երազները՝ տղամարդկանց ու կանանց, ծերերի ու երեխաների կերպարանքներով, բոլորն էլ բարի, ժպտուն դէմքերով, ամենագեղեցիկ զգեստներով: Շատերը ձեռներին բռնած ունէին ամեն տեսակ լաւ բաներ, ինչ որ միայն կարող է ուզել մարդու սիրտը: Բայց իերգը յանկարծ կանգ առաւ ու էնպէս բարձր ճչաց, որ բոլոր երազները ետ դառան դէպի նրան:

—Ի՞նչ պատահեց, հարցրեց թագաւորը:

—Ահա էստեղ է իմ ծանօթ աղջիկը, որ ինձ երևում էր էնքան յաճախակի ու վարդեր էր բերում ինձ համար:

—Ի հարկէ, ի հարկէ էստեղ է, պատասխանեց թագաւորը: Հէնց նա ինքն է, որ կայ: Ճշմարիտ է, չէ՞, որ քեզ լաւ երազ էի ղրկում: Գրեթէ ամենալաւ երազը...:

Ու իերգը վազեց դէպի իր ծանօթ աղջիկը, որ ինչպէս միշտ իր ոսկէ ձօձուձում նստած ձօձուձում էր: Նա էլ, հէնց սրան տեսաւ թէ չէ, ներքև թռաւ ու վազեց գիրկն ընկաւ: Իրար ձեռից բռնած նստեցին մօտակայ ոսկի աթոռին ու հրճաւ-

քով անվերջ կրկնում էին, թէ ինչ լաւ եղաւ, որ նորից իրար պատահեցին: Կրկնում էին ու կրկնում, և կարծես միշտ նոր էին ասում:

—Դէ, երեխէք, հերիք է: Քո տունը հեռու է, Իերգ, երբ պէտք է հասնես: Էստեղ քեզ չեմ կարող թողնել, մենք քեզ համար տեղաշոր չունենք: Դու գիտես որ երազները չեն



քնում, այլ գիշերները գնում են վերև—մարդկանց մօտ: Դու էլ, աղջիկս, պատրաստվիր, ժամանակն է որ ճանապարհ ընկնես: Ոտից գլուխ հագիր քո վարդագոյն զգեստներդ ու եկ, ես քեզ կասեմ՝ թէ ում ես երևալու էս գիշեր՝ ու ինչ ես անելու:

Երազող Իերգը էս որ լսեց, էնպէս մի տղամարդու թիւն

եկաւ վրէն, որ բնաւ չէր ունեցած: Վեր կացաւ ու հաստատուն ձէնով էսպէս կանչեց.

—Հայր արքայ, ասաւ, ես էլ չեմ բաժանւելու իմ երազից—իմ թագունուց: Կամ ինձ պէտք է թողնէք, որ մնամ էստեղ, կամ սրան պէտք է թողնէք, որ մեր աշխարհը գայ ինձ հետ: Առանց սրան էլ չեմ կարող ապրել, էնքան եմ սիրում...:

Ու աչքերը լցեցին խոշոր արցունքներով:

—Բայց, Իերգ, խօսեց երազների թագաւորը, պէտք է իմանաս որ սա իմ ամենալաւ երազն է: Սակայն դու իմ կեանքը փրկել ես, Իերգ, թող էնպէս լինի, ինչպէս դու ես կամենում:

Առ քո երազը ու գնա ձեր աշխարհքը: Բայց վերև գնաք թէ չէ՝ սրա գլխի արծաթէ բօղը պէտք է վերցնես ու դռնից գցես ներքև—դէպի ինձ: Էն ժամանակ քո երազը—քո թագունին էլ միս ու արիւն կառնի, կը դառնայ իսկական կին, թէ չէ այժմ նա անմարմին երազ է միայն...:

Իերգը թագաւորին սրտանց շնորհակալութիւն արաւ ու ասաւ.

—Սիրելի թագաւոր, քանի որ դու էդքան բարի ես, համարձակւում եմ մի խնդիրքով էլ անհանգստացնել քեզ: Տեսնում ես՝ արդէն թագունի ունեմ, բայց թագաւորութիւն չունեմ: Ի՞նչպէս կը լինի՝ թագունի առանց թագաւորութեան: Ձեռք կարող արդեօք մի թագաւորութիւն էլ տալ: Ի՞նչքան ուզում է փոքրիկ լինի, միայն թէ թագաւորութիւն լինի:

—Դիտես ինչ կայ, Իերգ, պատասխանեց Երազների թագաւորը.—թէ տեսանելի թագաւորութիւններ ես ուզում, ես չունեմ, բայց աներևոյթ թագաւորութիւններ—ունեմ, և նրանցից մինը քեզ եմ նւիրում, էն էլ ամենամեծերից ու ամենահոյակապներից մինը:

Իերգը հետաքրքրւեց իմանայ, թէ ինչ տեսակ բաներ են էդ աներևոյթ թագաւորութիւնները, բայց թագաւորը նրան պարզեց, թէ ամեն բան ինքը ժամանակին կ'իմանայ և

շատ կը զարմանայ, երբ կը տեսնի, թէ ինչ լաւ է ու ինչքան յարմար էդ տեսակ աներևոյթ թագաւորութիւն ունենալը:

— Սովորական, տեսանելի թագաւորութիւնները շատ անգամ շատ հոգսեր ու անախորժութիւններ են ունենում, բացատրեց թագաւորը: Օրինակի համար. ասենք թէ դու թագաւոր ես, դեռ անկողնումս ես՝ մին էլ տեսար առաւօտը վաղ նախարարը մօտեցաւ անկողնիդ ու ասում է.

«Ձերդ մեծութիւն, տէրութեան կարիքների համար ինձ մի հազար ռուբլի է պէտք»: Գանձարանը բաց են անում՝ տեսնում ես մէջը կողկէկ չըկայ: Ի՞նչ անես: Դեռ հալա էն էլ կարող է պատահել, որ քեզ պատերազմ յայտնեն, յաղթեն, ու էն թագաւորը, որ քեզ յաղթել է, պսակւի հէնց քո թագուհու հետ, իսկ քեզ մի աշտարակում փակի: Իսկ աներևոյթ թագաւորութեան մէջ անկարելի է, որ էդ տեսակ բաներ պատահեն:

— Բայց եթէ էդ թագաւորութիւնը աներևոյթ է ու մենք չենք տեսնելու, դրանից ի՞նչ դուրս կըգայ, հարցրեց Իերզը:

— Ա՛յ անխելք մարդ, բացականչեց թագաւորը, ախր չէ՞ որ ձեզ համար աներևոյթ չի լինիլ, դու ու քո թագուհին կը տեսնէք: Դուք պարզ կը տեսնէք ձեր թագաւորութիւնը և պալատները իրենց պարտէզներով, և՛ մարգարիտները, և՛ անտառները: Նրանց մէջը կապրէք, կըզբօսէք, կանէք, ինչ որ քէֆներդ կըտայ: Միայն ուրիշների համար կը լինի աներևոյթ, ուրիշները չեն տեսնիլ ձեր թագաւորութիւնը:

Իերզը սրա վրայ շատ ուրախացաւ, որ իրենց գիւղացիք ոչ կը տեսնեն, որ ինքը թագուհի ու թագաւորութիւն ունի, ոչ էլ նախանձից խեթ կը նայեն: Շնորհակալութիւններով հրաժեշտ տւեց Նրազների թագաւորին, իր թագուհու հետ հինգ հարիւր աստիճան վերև բարձրացաւ, նրա գլխից վեր առաւ արծաթի քօղը ու ձգեց ներքև: Յետոյ ուզեց ստորերկրեայ մուտքի դուռը ետ դնի, բայց էնքան ծանր էր, որ չը կարողացաւ պահի, ձեռիցը դուրս պրծաւ ու մի էն տեսակ ահագին թնդիւն հանեց, կարծես միանգամից բազմաթիւ թռն-

դանօթներ որոտացին, ու Իերզը յանկարծ ուշաթափ եղաւ: Մին էլ ուշքի եկաւ, տեսաւ ինքը իրենց դռան հին ջաղացաքարի վրայ նստած, կողքին կանգնած իր թագուհին, միայն ոչ թէ երազ, այլ մարմին առանց, սովորական կին:

Իր ձեռիցը բռնած նա փաղաքշում էր իրեն ու խօսում. «Ա՛յ դու իմ ազնիւ, իմ բարի, իմ յիմար Իերզ, ուրեմն էսքան ժամանակ սիրում էիր ինձ ու սիրտ չէիր անում ասես... վախենում էիր ինձանից...»:

Լուսինը ելաւ ու լուսափայլեց գետը, ալիքները հնչիւն ծփալով զարկում էին ափերին, անտառը խուլ աղմկում էր, նրանք դեռ նստած խօսում էին ու խօսում: Յանկարծ լուսնի վրայ մի սև ամպի պատառ եկաւ, էս միջոցին նրանց ոտների տակ մեծ թաշկինակի պէս մի բան ընկաւ, ու նորից լուսինն սկսեց փայլել առաջւայ պէս պայծառ: Նրանք թաշկինակը վեր առան, ուզեցին բաց անեն, բայց տեսան որ շատ է բարակ ու անթիւ անգամ ծալած, էնպէս որ երկար տևեց, մինչև բոլոր ծալքերը բաց արին:

Ետ բաց արին՝ ի՞նչ տեսնեն. աշխարհագրական քարտէզի նման մի բան: Մէջտեղից մի գետ է հոսում, գետի երկու կողմը քաղաքներ, անտառներ ու լճեր: Իսկոյն գլխի ընկան որ էս էն թագաւորութիւնն է, որ բարի Նրազների թագաւորը իրենց համար ցած է գցում երկնքից: Եւ երբ ետ նայեցին իրենց փոքրիկ տնակին, տեսան դարձել է հոյակապ պալատ, բիւրեղեայ աստիճաններով, մարմարէ թաւշածածկ պատերով ու բարձր աշտարակներով, փիրուզէ տանիքներով: Ձեռ ձեռի տւած ներս մտան ու կորան ծաղիկների մէջ, անուշահոտ բուրմունքների, երաժշտութեան, ուրախութեան ու ամեն բանի լիութեան մէջ:

Միւս օրը ամբողջ գիւղը դըրմբում էր, թէ երազող Իերզը վերադարձել է ու կին է բերել իրեն համար:

— Իրեն նման մի բան կը լինի էլի, ասում էին չորս կողմից:

— Էսօր առաւօտ՝ անտառ էի գնում՝ տեսայ շէմքումը

կանգնած էր, մէջ մտաւ մի գիւղացի: Բանի նման չի, կայ էլի. մի լղար, պուճուր աղջիկ ա: Հագինն ու վրէնն էլ հօ էնպէս...

—Բա ի՞նչ էր լինելու: Սա բան չունի, նա էլ սրա նման, նկատեց մի ուրիշը:

Էսպէս էին խօսում էն տխմար մարդիկ, ու չէին տեսնում որ առաջները կանգնածը թագուհի էր: Ոչ էլ էն էին նկատում, որ նրանց տնակը շքեղ պալատ է դարձել: Եւ ի՞նչպէս պէտք է տեսնէին: Իերգի համար ամպերից ընկած թագաւորութիւնը աներևոյթ թագաւորութիւն էր: Ինքը Իերգն էլ շատ չէր հոգում, թէ ի՞նչ են մտածում իր մասին կարճամիտ ու տխմար մարդիկ, ու իրեն համար ապրում էր իր թագաւորութեան մէջ իր թագուհու հետ ուրախ ու բախտաւոր:



ԱՍՏՂԵՐԻՑ ԻԶԱԾ ԿԻՆԸ

Հնդկական հեքիաթ

Հին ժամանակները, երբ դեռ Հնդկաստանում չէին երևացել սիպտակ մարդիկ իրենց հրացաններով, եւր դեռ նրա ճոխ ու ընդարձակ հովիտներում խաղաղ արածում էին գոմէշների երամակները, երբ դեռ աստղերն էլ մօտ էին երկրին ու չքնաղ, կենդանի արարածներ էին, և յաճախ իջնում էին մարդկանց մօտ, ահա էն ժամանակներից եմ պատմում:

Էն ժամանակները Կուլի գետի ափին ապրում էր մի ջահէլ որսկան: Նա սիրում էր կարմիր ծաղիկներն ու կապուտ երկինքը: Եւ մինչդեռ ուրիշները կաշէ բաճկոններով էին որսի գնում, նա կարմիր յուլունքներով զարդարած կօշիկներ էր հագնում, երեսը նախշում էր կարմիր շերտերով ու շրջանակներով, ինքը էլ էնպէս վառ ու նախշուն գուլում-զարդարում, ինչպէս վառ ու նախշուն գուլած են երկիքն ու երկիրը: Մագերի մէջ էլ միշտ կրում էր կարմիր կարապի փետուր, դրա համար էլ նրան կանչում էին Բարձր փետուր:

Մի անգամ իր նետ ու աղեղով զինւած Բարձր փետուրը գնում էր անտառով: Մի կանաչ բացատում նկատեց մի հետք — մանր ոտնատեղեր, որ երբէք չէր տեսել իր կեանքում: Ի՞նչ արարած է սա արդեօք, զարմաց է եկել և ուր է գնացել, զարմացած հարց տւեց իրեն ջահէլ որսկանը: Էն հետքը բռնեց ու գնաց: Աւելի զարմանքը մեծացաւ, երբ տեսաւ հետքը շրջան անելով եկաւ էլի էնտեղ, որտեղից սկսել էր ու գնացել:

Ինչ ուզում է լինի, պէտք է իմանամ ինչ արարած է սա, վճռեց ու պառկեց էն շրջանի մէջ բարձր խոտերում ու ծաղիկներում և մտածում էր անյայտ արարածի ու նրա ոտատեղերի վրա՝ հայեացքով խորասուզւած կապոյտ երկնքի մէջ:

Մին էլ նկատեց հէնց իր վերևում, երկնքի խորքում, մի փոքրիկ կէտ: Սկզբում արծւի տեղ ընդունեց, բայց հետզհետէ իջնելով մեծացաւ, մեծացաւ կէտը ու մին էլ տեսաւ մի զամբիւղ իջաւ երկնքից: Թփերի ետեւից նայեց. զամբիւղից դուրս եկան տասներկու հրեղէն-փարեղէն աղջիկներ՝ հագած երկնակապուտ ծփծփուն թափանցիկ հագուստներ: Զամբիւղից դուրս եկան մինը միւսի ետեւից և դալարի ու ծաղիկների մէջ սկսեցին պարել ու երգել, երգել էն տեսակ հրաշալի երգեր, որ Բարձր փետրաւորը իր օրում երբէք չէր լսել:

Էստեղ Բարձր փետրաւորը էլ չը կարաց համբերի, իր Թագստից դուրս թռաւ, ընկաւ նրանց շրջանը ու բացականչեց.

— Թողէք, թողէք, ես էլ երգեմ ու պարեմ ձեզ հետ...

Աղջիկները վախից ճչացին, վազեցին դէպի իրենց զամբիւղը, իրար ետեւից թռան զամբիւղի մէջ ու զամբիւղը արագութեամբ վերացաւ դէպի երկնքի խորքը, ու հետզհետէ փոքրանալով, անհետացաւ, կորաւ երիտասարդ որսկանի աչքից:

Երիտասարդը վերադարձաւ իրենց խրճիթը: Մէրը նրա համար գոմշի միս էր խորովել, բայց չը կարաց ուտի. ուշք ու միտքը էն տասներկու աղջիկների հետ զնացել էր դէպի երկինք:

Շատ խնդրեց մէրը, որ պատմէ թէ ինչ է պատահել: Սկզբում չէր ուզում, բայց վերջը պատմեց ամեն բան ու յայտնեց, որ չի հանգստանալ, մինչև էն աղջիկներից մինը կին չը բերի իրեն:

— Դրանք անպատճառ աստղաբնականներից են,— ասաւ որսկանի մէրը, որ նշանաւոր կախարդ էր: Դու աւելի լաւ կանես

մեզանից մի հնդիկ աղջիկ ուզես քեզ համար կին: Էլ մի մտածիր աստղաբնակ աղջիկների վրա, թէ չէ գլխիդ մի փոճանք կը բերես:

— Ոչ մի դժբախտութիւն ու ոչ մի դժւարութիւն ինձ չեն վախեցնում, միայն թէ կարենամ Աստղաբնակ աղջկանը ինձ կին առնեմ,— պատասխանեց որդին: Եւ ես պէտք է հասնեմ նրան, թէկուզ էդ քաշի մինչև աշխարհքի վերջը:

— Եթէ հաստատ էդպէս ես վճռել, թող քու ասածը լինի,— ասաւ մէրը ու միւս առաւօտը մի կտոր արջամկան մորթի կարեց տղի գլխի փետուրին, խրատ տւեց ու էնպէս ճաճանապարհ դրեց դէպի կախարդական շրջանը:

Շրջանը մտնելուն պէս երիտասարդը դարձաւ արջամուկն ու խոտերի մէջ տապ արաւ, սպասեց:

Մի ժամանակ դարձեալ նկատեց նոյն կէտը երկնքի խորքում: Հետզհետէ մեծացաւ կէտը, իջաւ, իջաւ ու վերջապէս իջաւ դետնին, էլի նոյն տեղը:

Աղջիկներից մեծը ուշադրութեամբ դիտեց չորս կողմը— արևելք, արևմուտք, հիւսիս ու հարաւ:

— Կարծես էսօր էստեղ մարդ չը կայ,— ասաւ նա ու բոլորը զամբիւղից դուրս թռան: Հէնց ուզում էին սկսեն իրենց պարը, որ փոքր աղջիկը արջամկանը նկատեց ու ցոյց տւեց մեծին:

— Շուտ, շուտ, փախէք էստեղից, ճչաց մեծը.— հասարակ արջամուկը երբէք չէր համարձակւի մտնել մեր նւիրական շրջանը: Արջամկան կերպարանքի տակ անշուշտ մի կախարդ է թագնւած:

Բարձր փետրաւորը վրա չը հասցրեց գոնէ մի խօսք ասի կամ իրենից ձգի արջամկան մորթին, որ զամբիւղն արդէն թրուչում էր երկնքում:

Երիտասարդը տուն վերադարձաւ սաստիկ տխուր ու կոտորւած:

— Մի՛ յուսահատուիր, որդիս,— ասաւ մէրը:— Մտեղէն մի



ուտիլ, էդ շատ է փնտրում մեզ ու փշագնում է մեր հմայքները: Գնա, եթէ սով զգաս՝ մորի կեր միայն:

Ապա թէ մի մկան բեղի ծէր կարեց որդու գլխի կարմիր փետուրին ու ճանապարհ դրեց:

Սոված, ճանապարհին մորի ուտելով հասաւ ու կախարդական շրջանը մտաւ երիտասարդը: Մտաւ թէ չէ—մուկ դարձաւ, բարեկամացաւ մի մկան ընտանիքի հետ ու իջաւ նրանց բունը: Մկները մէկը խոստացաւ ամեն բանում օգնել նրան:

Ահա նորից երկնքից իջաւ խորհրդաւոր զամբիւղը: Մեծ քոյրը դարձեալ դուրս մեկնեց զամբիւղից ու սկսեց դիտել շորս կողմը. հարաւ նայեց, հիւսիս նայեց, արեւիք նայեց, արեւմուտք նայեց, ներքեւ—գետնին նայեց.

—Էստեղ մարդ չըկայ,—ասաւ.—արջամուկն էլ չեմ տեսնում, բայց դարձեալ պիտի զգոյշ լինենք:

Եւ անա դուրս եկան նրանք ամենքը, պար բռնեցին ու սկսեցին երգել ու զարկել փոքրիկ թմբուկները, որ օձի կաշուից էին շինած: Էսպէսով հասան հէնց մկան բնին՝ մեծ քոյրը ձեռքը վեր բարձրացրեց, բոլորը միասին կանգ առան ու շունչները պահեցին: Ապա թէ ոտով գետնին զարկեց, ականջ դրեց ու ասաւ.

—Էստեղ առաջւայ նման խուլ չի հնչում: Երևի էսօր օտար հիւր կայ մկները մօտ: Նորից գետնին դոփեց ու կանչեց.

—Դուրս եկէք, երևացէք դուք, փոքրիկ դաւաճաններ, թէ չէ ձեր բունը կը քանդենք:

Բայց մէր մուկը արդէն անցք էր փորել, որ դուրս էր գալիս ուղիղ հէնց շրջանագծի միւս կողմը: Եւ մինչդեռ աղջիկները նրան շրջանի ներսն էին որոնում, նա իր ճուտերով արդէն փախչում էր շրջանից դուրս մարգերում:

Աղջիկները վազեցին ետևներից, որ սպանեն մկներին. ամենքը վազեցին բացի փոքրը, որ չէր կարող սպանել՝ ինչ ուզում էր լինէր: Էս ժամանակ Բարձր փետրաւորը դուրս եկաւ մկան բնից, առաւ իր մարդկային կերպարանքը, մօտեցաւ աղջկանը, բռնեց նրա երկու ձեռքից ու ասաւ.

—Արի գնանք մեր տունը, սիրուն աղջիկ, ու եղիր իմ կիներ: Էստեղ պար կը բռնես հնդիկ աղջիկների հետ, ես որս կանեմ, կը բերեմ քեզ համար, մէրս կեփի ու տունը կը կառավարի, և դու մեզ մօտ աւելի երջանիկ կը լինես, քան էստեղ—երկնքում:

Աղջիկը կամաւորութեամբ էր:

Երկնային աղջիկները եկան հաւաքւեցին, շրջապատեցին իրենց քրոջը, սկսեցին աղաչել, որ էնպէս բան չանի, նորից իրենց հետ գնայ վերև երկինք—իրենց տունը. բայց նա նայեց, նայեց երիտասարդին ու ասաւ.

—Կըգամ քեզ հետ, գնանք, ուր որ ուզում ես:

Մնացած քոյրերը ցաւալի լացով ու սուգով բարձրացան դէպի երկինք, անհետացան կապուտակ երկնքում, իսկ Բարձր փետրաւորը իր Աստղ-կնոջը բերեց իրենց վրանը Կուլի գետի ափերին: Իր երկնային հարսին տեսնելով, շատ ուրախացաւ երիտասարդ որսկանի մէրը, բայց որդու ականջին շշնջաց.

—Երբէք չը հեռանաս քո կնոջից, եթէ ուզում ես դրան պահես. ուր որ գնաս, հետդ տար անբաժան:

Էնպէս էլ արաւ երիտասարդ որսկանը: Իր կնոջ համար էլ նետ ու աղեղ շինեց ու միշտ հետը որսի էր տանում. բայց կինը երբէք չէր յօժարում նետ արձակելու, երբէք չէր ուզում սպանի, ինչ շունչ կենդանի ուզում էր լինէր, և երբէք որսի միս չէր ուտում, եթէ սպանում էին ուրիշները: Նա անտառներում ու մարգագետիններում միայն մօռ, մորի, հաղարձ և ուրիշ պտուղներ էք քաղում ուտում, մին էլ բերինձ: Էսպէս էր ապրում:

Մի անգամ էլ, երբ ջահէլ կինը զբաղւած էր իր ձեռագործով և փետուրներից ասղարուր աստղեր էր շինում իր տօնական զգեստի վրա, իսկ որսկանի մէրը գիւղի միւս ծէրին զրոյց էր անում իր ծանօթների վրանում, որտեղից որ էր ներս թռաւ մի փոքրիկ դեղին թռչնակ, վեր եկաւ Բարձր փետրաւորի ուսին ու ականջին ծլւաց.

—Ձեր մօտիկ լճի վրա վէր է եկել վայրի կարապետների երամը: Եթէ չուշանաս, շուտ հասնես և զգոյշ մօտենաս, կարող ես նրանցից բռնել, թէ չէ՝ ուր որ է կը թռչնեն: Միայն կնոջդ չիմացնես: Կարմիր կարապետները կանանց տանել չեն կարող: Ձեռաց հոտը կանոնեն, թէկուզ մի մղոնի վրա, ու կը թռչնեն:

Բարձր փետրաւորը ոչ թէ կարմիր կարապ չէր տեսել իր օրում, այլ չէր էլ լսել, թէ կարմիր կարապ կը լինի: Իր գլխի կարապի կարմիր փետուրն էլ ինքն էր ներկել: Մտիկ արաւ, տեսաւ կինը զբաղած է իր ձեռագործով ու գլուխը քաշ արած աստղեր է ասեղնագործում, կամաց դուրս սահեց, մտածելով թէ էնպէս շուտ կը վերադառնայ, որ նա իսկի չի իմանալ թէ երբ գնաց, երբ եկաւ: Բայց դուրս գնաց թէ չէ, վրանը ներս թռաւ էն գեղին թռչնակը, թառ եղաւ կնոջ ուսին ու ալանջի տակին սկսեց երգել մի հրաշալի երգ, թէ ինչպէս են ապրում նրա քոյրերն էնտեղ երկնքում: Ու չքնաղ կինը, որ մի ժամանակ աստղերի վրայ էր ապրել, յիշեց երկնային կեանքն ու իր անցած երջանկութիւնները, մոռացաւ երկրային ամեն բան, վեր կացաւ, քամու նման թռաւ դէպի նւիրական շրջանը, հէնց էն տեղ հասաւ, որ քոյրերը իջնում էին երկիրը: Տեսնելով իրենց քրոջը՝ շրջապատեցին ու սկսեցին աղաչել, որ իրենց հետ վերադառնայ երկինք—տուն:

—Բայց Բարձր փետրաւորը լաւ մարդ է ու ինձ շատ է սիրում, ինչպէս թողնեմ նրան,—ասաւ աղջիկը:

Մեծ քոյրը տեսնելով, որ փոքրը դժարանում է թողնել ամուսնուն՝ ասաւ.

—Դէ մնա, եթէ չես կարող բաժանուել նրանից. բայց խնդրում եմ, գոնէ մի ժամով մեզ հետ երկինք բարձացիր մեր հօրը տեսութեան: Էն օրւանից ինչ դու հեռացել իջել ես երկիր, նա շարունակ դարդ է անում:

Ձէր կամենում գնալ փոքր քոյրը, բայց էնքան էր հօրը կարօտել, որ անունը լսելուն պէս մտաւ խորհրդաւոր զամբիւղ՝ մի անգամ էլ նրան տեսնելու համար: Հէր ու աղջիկ

որ իրար տեսան, երկուսն էլ շատ ուրախացան, ու խօսեցին, խօսեցին, էնքան խօսեցին, որ կապուտակ երկինքը մթնածուռեց, ու աղջիկը յիշեց, որ ուշացել էր, պէտք է նորից իջնէր երկիր, իր ամուսնու մօտ:

—Էդ երբէք չի լինի,—ասաւ հէրն աղջկանը. փակեց նրան մի մեծ սպիտակ ամպի մէջ, ու յայտնեց, թէ դուրս չի թողնելու էն ամպից, մինչև չի խոստանայ, որ էլ չի վերադառնալ երկիր: Աղաչեց, պաղատեց աղջիկը, բայց իզուր: Ապա թէ լաց եղաւ, ու սկսեց արտասուել, արտասուք թափել էնքան առատ, որ սպիտակ ամպն էլ մթնեց ու սկսեց արտասուք թափել նրա հետ: Հէրը տեսաւ, որ եթէ շարունակի փակած պահել—աղջիկն արտասուքով կողողի երկիրը, բաց թողեց:

—Ի՞նչ անեմ,—ասաւ,—որ մնաս մեզ մօտ ու երջանիկ ապրես:

—Իմ ամուսնուն էլ բեր երկինք, պատասխանեց աղջիկը:

Ու երկիր իջրեց նւիրական դամբիւղը երկնային ծերունին:

Բայց ի՞նչ եղաւ Բարձր փետրաւորը:

Լճի ափը գնաց Բարձր փետրաւորը, տեսաւ կարմիր կարապետների մի գեղեցիկ բազմութիւն: Երկուսին սպանեց, մնացածը փախան: Սպանած կարապետն առաւ շտապեց վրանը: Եկաւ տեսաւ ձեռագործը կիսատ ընկած ու կինը չկայ: Սկսեց կանչել, պատասխան չկայ: Սպանած կարմիր կարապետներն ուսով ձգած վրանից դուրս վազեց դէպի խորհրդաւոր շրջանը—էնտեղ էլ չը կար:

Վճռեց հէնց էնտեղ էլ մնալ ու սպասել նրա վերադարձին, թէկուզ մինչև աշխարհքի վերջը: Ընկաւ գետին, խոտերի մէջ պառկեց ու հայեացքը աստղերին սկսեց նայեց, նայեց, մինչև յոգնեց, քունը տարաւ:

Առաւօտը վաղ աչքը բաց արաւ, խոտերի մէջ լսեց մի շրջիւն, մտիկ տուեց—կողքին ծանօթ զամբիւղը: Վեր թռաւ ու

խենթի նման, սպանած կարապներն էլ ուսին, ընկաւ զամբիւղը: Տեսաւ զամբիւղը դատարկ, մէջը ոչ ոք չըկայ, ու մինչև ուղեց դուրս գայ, արդէն անցել հասել էր երկնքի ու երկրի մէջտեղը ու արագ սլանում էր դէպի վեր: Սլացաւ, պացաւ, վերջապէս հասաւ Աստղերի աշխարհը, որտեղ սպասում էր իրեն սիրելի կինը: Կնոջ հէրը նրանց մի սքանչելի կապոյտ վրան նւիրեց: Էն կապոյտ վրանում նրանք ապրում էին երջանիկ: Բարձր փետրաւորը մի առ ժամանակ հարբած երկնային վայելքներով ու իր հրեղէն կնոջ սիրով կառարելապէս երջանիկ էր, բայց կամաց կամաց սկսեց ձանձրանալ ամպեղէն պտուղներից, որոնցով սնւում էին Աստղերի աշխարհում՝ նրանց բնակիչները, սկսեց կարօտել հաստատուն կանաչ դաշտերին, որսերին, ու թախանձեց կնոջ հօրը, որ բաց թողնի իրեն իր կնոջ հետ միասին նորից դէպի երկիր:

— Ոչ, անկարելի է, — պատասխանեց կնոջ հէրը, — թէ թողնեմ, էլ երբէք չեմ տեսնիլ նրան: Դու էլ մնա մեզ մօտ ու շուտով կը մոռանաս ձեր տխուր երկիրը:

Երիտասարդ որսկանը պատասխանի փոխարէն հագաւ իր սպանած կարմիր կարապներից մի զոյգի թևերը, միւս զոյգի թևերն էլ կնոջը տւեց ու վար ճախրեցին Աստղերի աշխարհից դէպի ցած, նորից իջան երկիր, իրենց դաշտերը, իրենց վրանը, ուր Բարձր փետրաւորի պառաւ մէրը ողբում էր իրենց կորուստը:


Երբ տեսաւ վերադարձան, անսահման ուրախացաւ պառաւ մէրը, ուրախացան ամենքը գիւղում, մեծ խնջոյք սարքեցին, ուրախութիւն արին ու երկար, երկար երգեցին ու պարեցին:

Որսկանի Աստղ-կիսն էլ վերջացրեց իր ասդարուր աստեղազարդ տօնական զգեստը հագաւ, մտաւ հնդիկների շարքը և պարում, երգում էր նրանց հետ: Էլ երբէք չը վերադարձաւ էն շրջանը, ուր իջնում էին իր հրեղէն քոյրերը: Ապրում էր պտուղներով ու հացահատիկներով, որովհետև չէր

սիրում սպանել, բացի մէկից, էն փոքրիկ դեղին թռչնակից:

Մի անգամ էլ, երբ ուրիշ կողմ էր Բարձր փետրաւորի ուշքը, նորից ներս թռաւ էն փոքրիկ դեղին թռչնակը, թառեց կնոջ ուսերին ու սկսեց շշնջալ, բայց կինը բռնեց, նրա վրը ուրեց: Էն էր ու էն, էն օրուանից էլ չեկաւ, չերկաց թևաւոր փորձիչը: Եւ էն ճոխ հովիտում, Կուրի գետի ափին իրենց խաղաղ վրանում, անբաժան ու երջանիկ իրար հետ ապրում էին ջահէլ որսկանն ու աստղերից իջած կինը:





Ընկերութեան հրատարակութիւնները.

1. Լ. Ուօլլէս. Բէն-Հուր. հ. 1. Թարգմ. անգլ. Փ. Վարդանեան .	— 75
2. Նոյն, հ. 11.	— 75
3. Շիրմանդաղէ. Արտիստը	— 25
4. Մուրացան. Գէորգ Մարգարտունի, պատմական վէպ	1— 20
5. Ժուլիպիկի. Քնած արքայադուստրը, պատկ. հէք. փոխ. Աթ. Խնկայեան .	15
6. Ստ. Տէր-Աւետիքեան. Պատմածքներ	— 50
7. Նար-Դոս. Մահը, վէպ	1— 20
8. Ն. Բուրակլն. Ստորերկրեայ կրակ. պատ.	— 50
9. Զ. Դիկիկեան. Իսաիթ Կողպէրֆիլդ. պատկ. վէպ. մասն առաջին, անգլ. Թարգմ. Փ. Վարդանեան	— 75
10. Նոյն, մասն երկրորդ	— 75
11. Նոյն, մասն երրորդ	— 70
12. Շիրմանդաղէ. երկերի ժողովածու, հատ. IV	1— 50
13. Դ. Դեմիրճեան. Բանաստեղծութիւններ.	— 57
14. Ոսկէ Աղջիկը, Թարգմ. Լ. Մելիք-Աղամեան	— 5
15. Ակ-Բողատ, Թարգմ. Ս. Թորոսեան	— 10
16. Ստեփաննոս Նազարեանի երկերը, հատոր 1	1— 50
17. Սպիտակ առնեղնիկը, փոխ. օր. Ն. Գրիգորեան	— 25
18. Ստ. Տէր-Աւետիքեան. Բուռն	— 0
19. Անուշ. Տէր-Աննդեան, Ուսնի	— 40
20. » » » Մաղկոց մտայ	— 35
21. Գրիմմ եղբայրներ չէքիաթները, պրակ 1	— 25
22. » » » » II	— 25
23. » » » » III	— 25
24. Աւետիս Ահարեան, Փորրիկ պատմածքներ	— 25
25. Ռուսական չէքիաթներ, Թարգմ. Յովհ. Թումանեան	— 25
26. Ռուսական չէքիաթներ, 1 Թարգմ. Յովհ. Թումանեան	— 25
27. » » » 11 Թարգմ. Յովհ. Թումանեան	— 25
28. » » » 11 Թարգմ. Յովհ. Թումանեան	— 25

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

1. Գաբրիէլ Դ'Անունցիօ. Զիօնդա. ողբ. 5 ար. Փր. Թրգմ. Ս. Յակոբեան:
2. Իր. Հաւնաւաճէ. Մուրացիանի պատմածք. վր. Թրգմ. Տ. Փիրումեան:
3. Ա. Ահարեան. Աստու կրակը:
- 4.—5. Իւլիկիչ. Թաղաւոր. ուս. Թարգմ. Գ. Յովհաննիսեան:
6. Ը. Մալխասեան. Յանցանքը:
7. Սէյրի. Ծիլ ու ծաղիկ:
- 8.—9. Կոմս Ա. Կ. Տօլստոյ. Իօանն Ահիլի մահը. ողբ. 5 ար., ուս. Թարգմ. Տ. Յովհաննիսեան:
10. Անտօն Զիսով. Պատմածքներ. ուս. Թարգմ. Ռ. Խան-Աղատ:
- 11.—12. Ա. Ս. Գրիբանցով, Նիկից պատուհաս. կոմ. չորս դործ. ոտանաւորով. Թարգմ. Լ. Մանէլեանի:
13. Լորդ Բայրոն. Մանֆրէդ. անգլ. բնագրից Թարգմ. Տիրայր վարդ.
14. Գի զը-Մապասան. 1-Ճարպաղունդը, 11-Ջարգը. Փրանս. Թարգմ. Ռ. Խան-Աղատ:
15. Վալպեան. Բժիշկը. զրամա 3 դործ:
- 16.—17. Կնուս Համսուն. Պան. Ալյոնանիս Թոմաս Գլանի թղթերից. զերմ. Թարգմ. Ա. Իսահակեան:
18. Մարգար. Վէպիկներ:
19. Թեոփոս կնոջ խոստովանքը, տ. Ն. Աթայեանի:
20. Յնօգօր Իօաննիս արքան, ողբ. 5 ար., Թարգմ. Տ. Յովհաննիսեան:
- 21, 22, 23. Հերման Զուդերման, Հոգսը, զերմ. Թարգմ. Դ. Ալթունեան:

ԻԻՐԱՔԱՆՁԻԻ ՀԱՄԱՐԸ 15 Կ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1. Զարարառաիկ Թուղթը, Ստ. Տէր-Աւետիքեան — 8
2. Նահապետական տուն, Մովսէս Դուկասեանց — 5
3. Դորձակատար Մարտիրոսը, Ս. Մ.-Շահնազարեան — 7

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.

« Ազգային գրադարան



NL0165496

